ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՍՈՓԵՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈԳՄԱՏԻԶՄԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Դ. ՕՍԻՊՅԱՆ

Սոփեստությունը դարեր շարունակ եղել է անարդարների զենքը, անսպառ աղբյուր է հանդիսացել կեղծ ճշմարիտի տեղ անցկացնելու, սեր, ինչպես ասում էր Մարքսը, սպիտակի տեղ ներկայացնելու եղանակների ու միջոցների համար։ Մարդկության ամբողջ պատմության ընթացքում սոփեստության են դիմել նրանք, ովքեր իրենց գաղափարների բացահայտ ու ազնիվ հոչակմանը և հակառակորդի դրույթների բացահայտ հերքմանը գերադասել են մոլորության մեջ գցելը, ովքեր օբյեկտիվորեն ճշմարիտ, ապացուցողական դատողությանը գերադասել են կողմնակի ճանապարհներով անցկացվող, արտաքուստ ճշմարտացի, բայց չապացուցված, իրենց համար միակ ձեռնտու դրույթը։

Սոփեստությունը որպես սոցիալական երևույթ միշտ եղել է հասարակական խարեության քողարկված, հետևաբար նաև առավել վտանգավոր միջոց, լայն մասսաների գիտակցության գաղափարական թունավորման միջոց, երկրևսանիության և դեմագոգիայի կարիքն ունեցող սոցիալական ուժերի շահերի և գործողությունների պաշտպանության ու արդարացման միջոց։

Սոփեստության մասին շատ է գրվել։ Սակայն փիլիսոփայության պատմության մեջ առաջին անգամ փաստորեն միայն մարքսիզմի կլասիկներին և առանձնապես Լենինին հաջողվեց ի հայտ բերել սոփեստության սոցիալական իսոր արմատները և պարզաբանել նրա իմացաբանական էությունը։

Սոփեստությունը բազմակողմանի երևույթ է։ Հանդես գալով որպես կենդանի դատողության պրոցեսում ճշմարտության աղավաղման որոշակի ձև, նա իմացաբանական խոր արմատներ ունի հասկացություններին օբյեկտիվորեն ներհատուկ ճկունության հատկությունը սուբյեկտիվորեն կիրառելու հնարավորությունների մեջ։ Սոփեստության տրամաբանական էությունը բացահայտում է նրա մի քանի առանձնահատկությունները՝ մտքի տրամաբանական կառուցվածքի որոշակի կողմերի օգտագործման առումով։ Վերջապես, լեզվական բաղադրամասը արտահայտչական ու իմաստային հնարավորությունների իր հարստությամբ, ինչպես նաև մտածողության նկատմամբ իր յուրօրինակ հարաբերություններով, որոշակի առումով լրացնում է սոփեստության նկարագիրը։

Սակայն այս ասպեկտների, առումների համախմբությունը դեռևս բավարար չէ սոփեստությունը որպես երևույթ առանձնացնելու և սահմանելու համար։ Մտածողության ու լեզվի որոշակի մոմենտները հնարավորություններ են ստեղծում սոփեստության երևույթի առաջացման համար, սակայն նա որ-

պես այդպիսին պարտադիր կերպով ենթադրում է այդ հնարավորությունների կանխակալ, կանխամտածված օգտագործման մոմենտի առկայություն։ Ճշմարտություններ աղավաղելու կանխամտածված ձգտումն այնտեղ, ուր բացակայում է ապացուցողականությունը, հանդիսանում է հենց սոփեստության դիմելու հիմնական շարժառիթը։

Սոփեստության իմացաբանական խոր էությունը բմբռնելու համար բանալի է հանդիսանում Լենինի այն դրույթը, թե սուբյեկտիվորեն կիրառված հասկացությունների ճկունությունը հանգեցնում է սոփեստության։ «Հասկացությունների համակողմանի, ունիվերսալ ճկունություն, մի ճկունություն, որ հասնում է հակադրությունների նույնության,—ահա՝ թե որն է էությունը — գրել է Վ. Ի. Լենինը։—Այդ ճկունությունը՝ կիրառված սուբյեկտիվորեն,—էկլեկտիկայի և սոփեստության։ Օբյեկտիվորեն կիրառված ճկունությունը, այսինքն նյութական պրոցեսի բաղմակողմանիությունը և նրա միասնությունն արտացոլող ճկունությունը, դիալեկտիկա է, աշխարհի հավիտենական զարգացման ճիշտ արտացոլում»[1]։

«Հասկացությունների ճկունություն» տերմինը կոչված է համառոտակի նշելու նրանց դիալեկտիկական էության կարևորագույն հատկանիշը՝ նրանց զարգացումն ու փոփոխությունները՝ նրանցում ներդրված հակադրությունների ծավալման միջոցով։ Աշխարհն իր շարժման ու զարգացման մեջ համակողմանիորեն արտացոլելու համար հասկացությունները իրար հետ մտնում են պայմանավորվածության նույնպիսի հարաբերությունների մեջ, ինչպես և երևույթները։ Լենինը նշել է, որ հասկացությունները պետք է լինեն «տաշված, հղկված, ճկուն, շարժուն, ռելյատիվ, փոխկապակցված, հակադրությունների մեջ միասնական, որպեսզի ընդգրկեն աշխարհը»[2]։

Այս տեսակետից հետաքրքրական է այն զուգահեռը, որ Լենինը անց է կացրել Հեգելի «Տրամաբանության գիտության» և Մարքսի «Կապիտալի», առանձնապես նրա առաջին գլխի, միջև։ Ի հակադրություն Հեգելի, որը սոսկ կոահեց իրականության դիալեկտիկան՝ հասկացությունների դիալեկտիկայի մեջ, Մարքսի մոտ հասկացությունների շարժումն ու զարգացումը վերացական-տրամաբանորեն արտացոլում է ապրանքային արտադրության իրական զարգացումը և վերջին հաշվով մտքի մեջ վերարտադրում է արտադրության կապիտալիստական եղանակը՝ նրա սահմանումների ամբողջ հարստությամբ հանդերձ։

Նշելով հասկացությունների փոփոխականությունը, հոսունությունը, անցումները, Լենինը միաժամանակ հատկապես ընդգծում է, որ հասկացությունների դիալեկտիկորեն բմբռնված ճկունությունը ենթադրում է նաև նրանց հարաբերական կայունություն, որոշակիություն։

Երկու մոմենտների՝ փոփոխականության և որոշակիության զուգորդումը ապահովում է հասկացությունների մեջ իրականության արտացոլման օբյեկտիվությունը։ Հասկացության մեջ որոշակիության մոմենտի անտեսումից բնականաբար բխում է նրա փոփոխականության բացարձակացումը, այսինքն հասկացությունների ճկունության ռելյատիվիստական մեկնաբանությունը։ Ռելյատիվիզմը, առանձնապես հասկացությունների ճկունության ռելյատիվիս-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 38, էջ 125—126։
2 սույն տեղում, էջ 173։

տական ըմբռնումը, տանում է դեպի սուբյեկտիվիզմի տարբեր ձևեր՝ սկեպտիցիզմ, ագնոստիցիզմ և սոփեստություն։ Սկեպտիցիզմը և ագնոստիցիզմը, որպես իմացաբանական կոնցեպցիաներ, հանդիսանում են մտածողության, իմացության սուբյեկտիվիստական ըմբռնումներ, որոնք կասկած են սնում մարդու իմացական հնարավորությունների նկատմամբ։ Իսկ սոփեստությունը սուբյեկտիվիզմի այն ձևն է, որի մեջ ռելյատիվիստորեն մեկնաբանված հասկացությունների ճկունությունը հիմք և նախադրյալ է հանդիսանում ու հնարավոր է դարձնում հասկացությունների ճկունության սուբյեկտիվ կիրառումը։

Այսպիսով, սոփեստությունը, ունենալով իմացաբանական նախադրյալներ, ինքը չի գտնվում իմացության տեսության սահմաններում, այսինքն ճանաչողության պրոցեսի որոշակի ըմբռնում չէ, այլ ավելի շուտ վերաբերում է մտածողության «պրակտիկային», հասկացություններով գործառնելու ոլորտին։

Հասկացությունները գործածելիս նրանց հարաբերականությունը, այսինքն այն հանգամանքը, որ նրանք մտքի տարբեր կոնտեքստներում ընդունակ են տարբեր նրբերանգներ ձեռք բերելու, միջոց է դառնում դատողության ընթացքում տրամաբանական սխալ գործելու համար, անհատին անհրաժեշտ գրույթները որպես ապացուցված ներկայացնելու համար։

Սոփեստական դատողությունների բնորոշ գիծը նրանց վերացականությունն է՝ իրականությունից կտրված լինելու իմաստով։ Սոփեստական ապացուցումը ըստ էության հանգում է մի հասկացությունից (դատողությունից) մեկ ուրիշը բխեցնելու գործողությունների, այսինքն դուրս չի գալիս վերացական դատողությունների շրջանակներից։

Լենինյան ժառանգությունը մեզ ընձեռում է սոփեստության էության քննադատության փայլուն օրինակներ։ Ընդ որում Լենինը հատկապես նշում է սոփեստական դատողությունների վերացականությունը, նրանց կտրվածությունը իրականությունից, առաջին հերթին՝ այդ դատողություններում կոնկրետ իրադրությունը հաշվի չառնելը։ Լենինը նշել է, որ գիտական ապացուցումը չպետք է սահմանափակվի միմիայն տրամաբանական դատողություններով, այլ պետք է ներառնի նաև «...ամեն ինչ համաշխարհային պատմության բոլոր փաստերով, դեպքերով, դասերով ստուգելու» եղանակ[3]։

Սոփեստական դատողությունների գլխավոր հատկանիշներից մեկն այն է, որ դրանք միշտ հանդես են գալիս որպես շահագրգռություն պարունակող դատողություններ՝ ուղղված զրուցակցին, հակառակորդին, նպատակ ունենալով նրան համոզել որևէ բանում կամ խարխլել նրա հավատը որևէ բանի նկատմամբ։ Դատողությունների ընթացքում կատարվող սխալը, որպես կանոն, լինում է քողարկված, որպեսզի ստեղծվի ճշմարտացիության խաբուսիկ տպավորություն, իսկական ապացուցողականության բացակայությունը փոխհատուցվի նրա արտաքին համոզչությամբ։

Իրականում կեղծ գրույթի ապացուցվածության տպավորություն ստեղծելու համար պոտենցիալ հիմք է հանդիսանում հասկացություններին ներհատուկ ճկունության երկակի կիրառման հնարավորությունը։ Պարզ ասած. հասկացությունների ճկունության սուբյեկտիվ կիրառումն է, որ պարունակում է սոփեստության իմացաբանական արմատները, իմացաբանական հնարավորությունը։ Այդ հնարավորությունը իրականության է վերածվում միայն այն

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 192։

դեպքում, երբ առկա է շահագրգռվածության որոշակի վիճակ, որը պայմանավորում է հասկացությունների ճկունության աղավաղված կիրառման կոնկրետ պահանջը։

Ճանաչող և դատողություններ անող սուբյեկտի նպատակներն ու դիտավորությունները որոշող հանգամանքների թվում առանձնացնելով անհատական բնույթի հանգամանքները, անհրաժեշտ է ընդգծել, որ դրանք մեծապես կանխորոշված են ա՛նհատի սոցիալական էությամբ։ Ինչպես նշել է Լենինը՝ «հասարակության մեջ ապրել և հասարակությունից ազատ լինել չի կարելի»[4]։ Դարաշրջանի շահերը, հասարակության շահերը, դասակարգի շահերը խոր կնիք են դնում անհատի կողմից իրական աշխարհի ընկալման վրա և վերջին հաշվով կանխորոշում են այդ ընկալման տեսանկյունը։

Հասկանալի է, որ սուբյեկտի նպատակներն ու դիտավորությունները նշանակում են՝ ձգտել այնպիսի արդյունքների, որոնք անհրաժեշտ, հարկավոր, օգտակար են իր համար, ուրեմն և, վերջին հաշվով ու որոշ չափով, նաև այն դասակարգի համար, սոցիալական այն խավի համար, որին նա ներկայացնում է։ Ընդ որում սոցիալական, դասակարգային շահերը կարող են համընկնել պատմության ընթացքի հետ (սոցիալական առաջադիմության կրողը հանդիսացող դասակարգերի ու խավերի մոտ) և չհամընկնել նրա հետ (ռեակցիոն խավերի ու դասակարգերի մոտ)։ Եթե դասակարգի շահերը ռեակցիոն են, ապա տվյալ դասակարգի համար օգտակարը միշտ չէ, որ համընկնում է ճշմարտության հասնելու շահագրգռվածության հետ։ Այնինչ առաջադեմ դասակարգը իր նպատակների իրականացման համար կարիք չունի ճշմարտություններ աղավաղելու։

Ինչպես հայտնի է, ճշմարտության աղավաղումը կարող է կատարվել գիտակցաբար կամ անգիտակցաբար։ Վերլուծելով գաղափարախոսության մեջ դասակարգային շահերի ու ձգտումների արտացոլման հարցը, Պլեխանովը նշել է, որ առանձին անհատը, ձգտելով իր շահերը համաձայնեցնել դասակարգի շահերին, կարիք չունի դիմելու «գիտակցված երկերեսանիության»։ Այն անկեղծ համոզմունքը, որ իր դասակարգի շահերը համընկնում են ամբողջ հասարակության շահերի հետ, միանգամայն բավարար է, որպեսզի անհատը սխալ համարի այն գաղափարները, որոնք վատ հետևանքներով են հղի իր դասակարգի համար, և ճշմարիտ այն գաղափարները, որոնք իր դասակարգի համար կարող են օգտակար լինել։ Պլեխանովը օգտակարը ճշմարիտի հետ նույնացնելու հոդերանական պրոցեսի մասին ասում է. «Տվյալ հասարակական դասակարգի համար օգտակարը ճշմարիտ է այդ դասակարգը կազմող առանձին անձանց աչքում»[5]։ Ընդ որում Պլեխանովն ընդգծում է պատմության որոշակի ժամանակաշրջաններում «գիտակցված» կամ «չգիտակցված» երկերեսանիության գերակշռության մի շատ բնորոշ օրինաչափություն. որքան ավելի է դասակարգը մոտենում իր անկմանը և կանգնում պատմության օբյեկտիվ ընթացքի համեմատ ռեակցիոն դիրքերում, այնքան «չգիտակցված» երկերեսանիությունը իր տեղը զիջում է «գիտակցված» երկերեսանիությանը։ Սոփեստությունն իր էությամբ հենց հանդիսանում է գիտակցված երկերեսանիության առավել ընդունելի ձևը։

---

4 Նույն տեղում, հատ. 10, էջ 44։

5 Գ. Վ. Պլեխանով, Առաջարան Ա. Դերորինի «Դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայության ներածություն» գրքի, Մ., 1930, էջ 22։

Լենինը նշել է, որ անհրաժեշտ է «կարողանալ գլուխ հանել այն տարածված ֆրազներից և ամեն տեսակ սոփեստություններից, որոնցով ամեն մի դասակարգ և ամեն մի խավ վարազուրում է իր եսասիրական հակումներն ու իր ուկական «ներսույթը»»[6]։

Հասկանալի է, որ եթե բոլոր ժամանակների ռեակցիոներները կառչել են սոփեստությունների ու ամեն տեսակ խորամանկությունների՝ չհաշտվելով բոլոր այն ճշմարտությունների հետ, որոնք լուրջ սպառնալիք են ներկայացրել իրենց սոցիալական գոյության համար, ապա բնական է այն սարսափը և այն կատաղությունը, որ առաջ է բերել և առաջ է բերում մարքսիզմը կործանման դատապարտված դասակարգերի ներկայացուցիչների մեջ։

Զարմանալի և պատահական չէ, որ առանձնահատուկ, նպատակադիր սոփեստական աղավաղումների է ենթարկվել հենց մարքսիզմը՝ ռևոլյուցիոն պրոլետարիատի տեսական հզոր զենքը։

«Մարքսիզմը և ռևիզիոնիզմը» աշխատության մեջ Լենինը գրում է. «Հայտնի իմացաստախոսությունն ասում է, որ եթե երկրաչափական աքսիոմաները դիպչեին մարդկանց շահերին, ապա դրանք անշուշտ կհերքվեին... Զարմանալի չէ, որ Մարքսի ուսմունքը, որն ուղղակի ծառայում է ժամանակակից հասարակության առաջավոր դասակարգի լուսավորությանն ու կազմակերպմանը, ցույց է տալիս այդ դասակարգի խնդիրները և ապացուցում է — տնտեսական զարգացման հետևանքով — ժամանակակից հասարակարգի անխուսափելի փոխարինումը նոր կարգերով, զարմանալի չէ, որ այդ ուսմունքը կյանքի ճանապարհին իր ամեն մի քայլափոխ պետք է կռվով նվաճեր»։ Հիմա էլ սոփեստությունը կրկին հանդես է գալիս որպես մարքսիզմի թշնամիների հիմնական զենք, որն օգտագործվում է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն տեսության հիմնական դրույթների ռևիզիայի և աղավաղման համար։

Միաժամանակ հետաքրքրական է նշել, որ սոփեստությունը որպես ճշմարտության աղավաղման եղանակ օգտագործում են ոչ միայն մարքսիզմի բացահայտ թշնամիներն ու ռևիզիոնիստները, այլև դոգմատիկները։ Առաջին հայացքից կարող է թվալ, որ դոգմատիզմը, որը պ՛դանտորեն հետևում է տվյալ ուսմունքի տառին, բոլորովին կարիք չունի սոփեստության դիմելու։ Սակայն մոտիկից քննելիս պարզվում է, որ սոփեստությունը ամենևին էլ խորթ չէ դոգմատիզմի բուն էությանը։

Մերկացնելով դոգմատիզմը, Լենինը միշտ, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ցույց է տվել, որ անկախ այն բանից, թե բանվորական շարժման մեջ դոգմատիկական երևույթները ինչ ձև են ընդունել «աջ» սխալների, թե «ձախ» խոտորումների, դրանք միշտ նպատակ են ունեցել ապակողմնորոշել մասսաներին, դաղափարապես զինաթափել բանվորական ռևոլյուցիոն շարժումը։

Լենինյան քննադատության ամբողջականությունը և դիպուկությունը պայմանավորված է այն բանով, որ այդ քննադատությունը խորանում է դոգմատիզմի բուն էության մեջ, պարունակում է այդ երևույթի տեսական սպառիչ վերլուծություն։ Դոգմատիզմի լենինյան քննադատության մեջ մեծ տեղ է հատկացված տեսականորեն նրա անհիմն լինելը բացահայտելուն։

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, էջ 517։
7 Նույն տեղում, հատ. 15, էջ 21։

Դոգմատիզմն ամբողջությամբ վերցրած կարելի է բնութագրել որպես պրոբլեմների քննության հակապատմական եղանակ, այսինքն մի եղանակ, որը հաշվի չի առնում կոնկրետ պատմական զարգացումը, հարցադրման ու պրոբլեմների լուծման անիուսափելի փոփոխությունները այն բանի հետևանքով, որ նրանցում պետք է արտացոլում գտնի պատմականորեն անկրկնելի յուրաքանչյուր երևույթի յուրօրինակությունը։

Դոգմատիզմը դիալեկտիկայի հակադրություններից մեկն է և մետաֆիզիկայի, մտածողության մետաֆիզիկական եղանակի դրսևորումը՝ երևույթներին մոտենալու ասպարեզում, հասարակական ու բնագիտական տեսությունները դնահատելու ասպարեզում։

Ի հակադրություն դիալեկտիկայի, որի հիմնական սկզբունքը տեսության ու պրակտիկայի զուգորդումն է, տեսությունը պրակտիկայի տվյալներով մշտապես շտկելու ու ճշտելու սկզբունքը, դոգմատիզմը կանգնած է գիտելիքի զարգացման, փոփոխման մետաֆիզիկական անտեսման դիրքերում, կիրառում է վերացական, սխոլաստիկ, անփոփոխ ձևակերպումներ, որոնք ընդունվում են որպես միակ դեղատոմսեր կյանքի բոլոր դեպքերի համար։ Այս իմաստով դոգմատիզմը հանդես է գալիս ոչ միայն որպես պրոբլեմների քննության ու մեկնաբանության հակապատմական, այլև վերացական եղանակ։

Դոգմատիզմի համար բնորոշ է այն հանդամանքը, որ նա կառչում է արդեն ձևոք բերված, իր համար անսասան տեսական դրույթներին։ Այնինչ իմացության նկատմամբ դիալեկտիկական վերաբերմունքը ենթադրում է, որ երևույթների իմացության և օգտագործման համար նրանց մոտենալիս, մենք, զեկավարվելով արդեն կուտակված գիտելիքներով, պետք է հաշվի առնենք տվյալ երևույթի կոնկրետ առանձնահատկությունները, ուստի և որոշ չափով քննադատական վերաբերմունք ցուցաբերենք մեր գիտելիքների (գրույթների, տեսությունների և այլն) նկատմամբ։ «Դրիտասարդության միությունների Խնդիրները» հոդվածում Լենինը գրել է, որ անհրաժեշտ է գիտակցության մեջ վերամշակել ստացած գիտելիքները, նրանց վերաբերվել քննադատաբար, հարստացնել բոլոր փաստերի իմացությամբ[8]։ Իսկ դոգմատիզմը զուրկ է քննադատական վերաբերմունքի այդ անհրաժեշտ բաղադրամասից։ Դոգմատիզմին հակադիր մյուս ծայրահեղությունն այս հարցում սկեպտիցիզմն է, որի մեջ քննադատական վերաբերմունքը նույնանում է ժխտողական մոտեցման հետ։ Այս իմաստով հետաքրքրական է Հեգելի այն ասույթը, թե «դոգմատիզմի ուղղակի հակադրությունը մերձավորագույն կերպով սկեպտիցիզմն է»[9]։

Դոգմատիկը նոր երևույթին մոտենալիս միշտ աշխատում է այն ամբողջովին տեղավորել հին տեսության շրջանակներում։ Այդպիսին է, մասնավորապես, նաև դոգմատիզմը բնագիտության ասպարեզում։ Օրինակ, մեր դարասկզբին որոշ ֆիզիկոսներ աշխատում էին նոր հայտնագործությունները բացատրել կլասիկ ֆիզիկայի կատեգորիաներով, այսինքն, փաստորեն անտեսելով այդ հայտնագործությունների յուրահատկություններն ու որակական նոր մակարդակը, ճգնում էին դրանք տեղավորել հին շրջանակների մեջ։

Հասարակական կյանքում և հասարակագիտության մեջ դոգմատիզմը, վերջին հաշվով, վերածվում է քաղաքական ռեակցիոն ուժի, առնվազն՝ հան-

---

[8] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 349—350։

[9] Гегель, Соч., т. 1, М.-Л., 1929, էջ 69։

դեպ է գալիս որպես քաղաքական ռեակցիայի օժանդակ միջոց։ Դոգմատիզմով, որպես կանոն, զինվում են պահպանողական ուժերը, որոնք ընդունակ չեն ընկալելու նորը և իրենց հակադրում են պատմության օբյեկտիվ առաջընթացին.

Դոգմատիզմը գործառնում է բացարձակ, հավիտենական, անփոփոխ ճշմարտություններով, ճշմարտությունը ընկալելով որպես համապարփակ մի կաղապար, որը կիրառելի է առանց որևէ սահմանափակման, դոգմատիզմը վերջին հաշվով աղավաղում է ճշմարտությունը, «որովհետև ամեն մի ճշմարտություն, եթե այն դարձնենք «չափազանց»... եթե այն գերագնահատենք, եթե այն տարածենք իր իրական կիրառելիության սահմաններից դուրս, կարելի է անհեթեթության հասցնել, և այն նույնիսկ անխուսափելիորեն, հիշյալ պայմանների առկայության դեպքում, անհեթեթություն է դառնում»[10]։ Լենինը նշել է, որ որևէ գաղափար, մասնավորապես քաղաքական գաղափարը, վարկաբեկելու ամենից հաստատ միջոցն այն է, որ հանուն նրա պաշտպանության այն անհեթեթության հասցվի[11]։

Իսկ դիալեկտիկական մոտեցումը, ընդունելով գիտելիքի մեջ առկա հարաբերականության մոմենտը, դրանով իսկ մի փոքր «անորոշություն» է մտցնում մեր գիտելիքի բացարձակ բնույթի մեջ, կանխելով դոգմատիզմը, միևնույն ժամանակ իր այդպիսի մոտեցման շնորհիվ, այն է՝ ընդունելով գիտելիքի հարաբերականությունը առանց բացարձակի մոմենտը ժխտելու, երաշխավորում է գիտելիքի օբյեկտիվ ճշմարտությունը, սահմանազատվելով սուբյեկտիվիզմի զանազան ձևերից։ Դիալեկտիկական մատերիալիզմի մեջ հարաբերական և բացարձակ ճշմարտությունների տարբերումը, ինչպես ասել է Լենինը, «հենց այնքան է «անորոշ», որպեսզի խանգարի գիտությունը բառիս վատ իմաստով դոգմայի, ինչ-որ մեռյալ, լճացած, ոսկրացած բանի փոխարկելուն, բայց միևնույն ժամանակ հենց այնքան է «որոշ», որպեսզի ամենավճռական և անդարձ կերպով պատվարվենք ֆիդեիզմից և ագնոստիցիզմից, փիլիսոփայական իդեալիզմից և Հյումի ու Կանտի հետևորդների սոփեստաբանությունից»[12]։

Լենինը մարքսիզմը դիտում էր որպես կենդանի, ստեղծագործական, զարգացող ուսմունք։ Մարքսիզմը, որը պնդում է, թե կյանքն անհամեմատ հարուստ է ամեն մի բանաձևից ու ձևակերպումից, որ ճիշտ է միայն այն տեսությունը, որը բացառում է տեսության տատին կառչելու միտումը, իր էությամբ ու ոգով բացառում է մտքի լճացումը։ Մարքսիզմի այդ ոգին ենթադրում է մշտական զարգացում, ռևոլյուցիոն նորարարություն հենց մարքսիստական տեսության բնագավառում։ Իր ամբողջ պրակտիկ ու տեսական գործունեությամբ Լենինը, որը մարքսիզմը դուրս բերեց ռևոլյուցիոն պրակտիկայի թատերաբեմ և համապատասխանաբար այն հարստացրեց կարևորագույն հետևություններով և դրույթներով, դրանով իսկ տեսության նկատմամբ ստեղծագործական մոտեցման փայլուն օրինակ ցույց տվեց։

Իր մի շարք աշխատություններում Լենինը անխնա քննադատում է այս վայ-տեսաբաններին, «որոնք արդեն քանիցս տխուր դեր են խաղացել մեր պարտիայի պատմության մեջ՝ կրկնելով անմտորեն սերտած ֆորմուլան, փո-

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 58—59։
11 Տե՛ս նույն տեղում, էջ 58։
12 Նույն տեղում, հատ. 14, էջ 171։

խանակ ուսումնասիրելու նոր, կենդանի իրականության յուրահատկություններր»[13]։ Նա շարունակ հիշեցնում էր, որ մարքսիզմի կլասիկներր զգուշացնում էին, թե մարքսիզմը չպետք է ընդունել որպես դոգմա, որպես ավարտուն, պատրաստի, անփոփոխ մի ուսմունք, այլ հաստատակամորեն խորհուրդ էին տալիս այն կիրառել որպես գործողության ուղեցույց, և որ հենց դրա շնորհիվ էլ մարքսիզմը «չի կարող իր վրա չարտացոլել հասարակական կյանքի պայմանների զարմանալի սուր փոփոխումը»[14]։

«Նամակներ տակտիկայի մասին» աշխատության մեջ Լենինը նշում է, որ «անհրաժեշտ է յուրացնել այն անվիճելի ճշմարտությունը, որ մարքսիստը պետք է հաշվի առնի կենդանի կյանքը, իրականության ճշգրիտ փաստերը, և ոչ թե շարունակի կառչել երեկվա թեորիային, որը, ինչպես և ամեն մի թեորիա, լավագույն դեպքում միայն նշում է հիմնականը, ընդհանուրը, միայն մոտեանում է կյանքի բարդությունն ընդգրկելուն»[15]։

Պատմական կոնկրետ վերլուծություն՝ ահա՛ այն միակ բանալին, որը թույլ է տալիս պարզելու, թե ինչ սահմաններում են կիրառելի ձեռք բերված տեսական դրույթները իրականության բազմազան, անկրկնելի փաստերի նկատմամբ։ Ահա՛ այն չափանիշը, որը անսխալ կերպով կօգնի գտնելու միակ ճշմարիտ, միակ հեռանկարային մոտեցումը իրականությանը, կօգնի խուսափելու ամեն տեսակ շեղումներից ու տեսական անհաջողություններից։ Մարքսիզմի ռևոլյուցիոն ոգուն չափազանց խորթ է Մարքսի՝ իր դարաշրջանի համար միակ ճշմարիտ դրույթների մեխանիկական տարածումը փոփոխված պայմանների նկատմամբ, նոր դարաշրջանում։ Քննարկելով այն հարցը, թե արդյոք կարող ենք Լեհաստանը ռևոլյուցիոն համարել նաև նոր դարաշրջանում և արդյոք անհրաժեշտ էր ակտիվ կերպով աջակցել Լեհաստանին անկախություն տրամադրելու պահանջներին, Լենինը գրել է. «Եթե «Լեհական սոցիալիստական պարտիան»... 1896 թվականին փորձում էր «ամրապնդել» Մարքսի տեսակետը այլ էպոխայում. ապա այդ արդեն նշանակում էր մարքսիզմի տառն օգտագործել ընդդեմ մարքսիզմի ոգու»[16]։

* * *

Իրենց տեսական դրույթները հիմնավորելու համար դոգմատիկները հաճախ ստիպված են լինում դիմելու սոփեստության։ Դա պայմանավորված է երկու հանգամանքով։ Դոգմատիզմը իր պահպանողական էության պատճառով ետ է մնում իրականությունից, ուստի և իր տեսական դրույթների արդարացման համար դիմում է դեմագոգիայի զանազան միջոցների, այդ թվում նաև սոփեստության։ Մյուս կողմից, դոգմատիզմի համար բնորոշ է տեսության առանձին դրույթների կորզումը և բացարձակացումը, որոնց վրա էլ նա կառուցում է իր տեսակետը, իր կոնցեպցիան։ Այսպես, իրենց մարքսիստ հռչակող դոգմատիկները, որպես կանոն, վերցնում են մարքսիզմի կլասիկների առանձին ասույթները, որ նրանք ընկալում են որպես ֆորմուլաներ, մոռանալով, որ այդ ասույթները հանդիսանում են որոշակի, կոնկրետ իրադրության նկատմամբ ընդհանուր սկզբունքի կիրառման արդյունք և որ չի կարելի, ան-

13 Նույն տեղում, հատ. 24, էջ 32։
14 Նույն տեղում, հատ. 17, էջ 33։
15 Նույն տեղում, հատ. 24, էջ 33։
16 Նույն տեղում, հատ. 20, էջ 541։

տեսնելով դասակարգային ուժերի ընդհանուր հարաբերակցության փոփոխման փաստը, վերացական սխեմայի վերածել կոնկրետ, իր ժամանակի համար հիմնավորված դրույթներու Դրանով իսկ դոգմատիկները հակասության մեջ են ընկնում այն իսկ տեսության հետ, որը հավակնում են պաշտպանել։ Այս անհամապատասխանությունը կոծկելու համար ևս դոգմատիկները ստիպված են դիմելու դեմագոգիայի տարբեր միջոցների, մասնավորապես նաև սոփեստության։

Դոգմատիզմի և սոփեստության լենինյան քննադատությունն առանձնապես ակտուալ է հնչում այսօր, երբ Չինաստանի կոմպարտիայի ղեկավարները, խոսքով հավատացնելով, թե իրենք հավատարիմ են մարքսիզմ-լենինիզմին, փաստորեն պայքար են մղում մեր դարաշրջանի պայմանների նկատմամբ մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների ստեղծագործական կիրառման դեմ, երբ նրանք, խոսքով հանդես գալով հօդուտ դիալեկտիկայի, իրականում այն նենգափոխում են սոփեստական բառախաղով։

Բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների ստեղծագործական կիրառման շնորհիվ եղբայրական պարտիաների ընդհանուր ուժերով մշակված գնահատականներին և հետևություններին, չին ղեկավարները, նկնելով մարտնչող դոգմատիզմի դիրքերից, արտառոց պահպանողականություն և սահմանափակություն են ցուցաբերում մարքսիզմի տառն ու ոգին ըմբռնելու և զանազանելու մեջ։

Այդպիսիք են համաշխարհային սոցիալիստական սիստեմի դերի գնահատման հարցը, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ուղիների, համաշխարհային պատերազմը կանխելու հնարավորությունների, սոցիալական տարբեր կարգ ունեցող երկրների խաղաղ գոյակցության, սոցիալիզմին անցնելու ձևերի հարցերը. անհատի պաշտամունքի գաղափարախոսության ու պրակտիկայի դեմ պայքարելու անհրաժեշտության հարցը և այլն։

Իրենց հռչակած կուրսը, որի մեջ միահյուսված են մանր-բուրժուական ավանտյուրիզմն ու մեծապետական շովինիզմը, չին ղեկավարները ճգնում են պարտադրել ամբողջ սոցիալիստական լագերին և համաշխարհային կոմունիստական շարժմանը։

Իրենց համար ձեռնտու պնդումների խարուսիկ հիմնավորվածությունը չին տեսաբաններն աշխատում են ապահովել՝ օգտագործելով մարքս-լենինյան ուսմունքի անվիճելի և անբասիր ճշմարտությունները։ Նրանց մտակառուցումների սոփեստությունը կայանում է այն բանում, որ, գիտակցաբար անտեսելով երևույթների վերլուծության և իրադրության գնահատման ժամանակ կոնկրետ, դիֆերենցված մոտեցում ցուցաբերելու պահանջը, նրանք դոգմատիկորեն ընկալված մարքսիզմի դրույթները մեկնաբանում են իրենց ձեռնտու իմաստով, այն տպավորությունն ստեղծելով, թե իրենք հավատարիմ են մարքսիզմի սկզբունքներին, միակ հետևողական լենինյաններն ու իսկական ռևոլյուցիոներներն են։

Այսպես, տեսության ասպարեզում նրանք հասարակացնում ու գռեհկացնում են դիալեկտիկայի ամենից էական դրույթը՝ հակադրությունների պայքարի միջոցով իրականացող շարժման հարցը, այդ սկզբունքի համընդհանրությունն ընկալելով իբրև բոլոր և ամեն տեսակի հակասությունների համարժեքություն։ Այնինչ մարքսիստական դիալեկտիկան ենթադրում է դիֆերենցված մոտեցում հակասությունների նկատմամբ, իրականության երևույթների

կապերի և հարաբերությունների ամբողջ համակարգից առանձնացնելով օբ-լեկտիվորեն անհրաժեշտ ու պատահական, էական ու ոչ-էական և այլ կարգի հակասություններ։ Յուրաքանչյուր պրոցեսի հակասությունների թվում դիալեկտիկան առանձնացնում է հիմնական, առաջատար հակասությունը, նրա գլխավոր շարժիչ ուժը։

Դիալեկտիկան հանգեցնելով օրինակների գումարի և եզակի փաստերի էմպիրիկ արձանագրման, չին «տեսաբաններն» այն տեղն են հասնում, որ իրենք են հորինում մտացածին, երբեմն շատ արտառոց հակասություններ, ինչպես, օրինակ, հակասություն... մարդու երկու ոտքերի միջև։ Այսպիսին է դիալեկտիկայի չինական գուեհկացումը, փիլիսոփայական սկզբունքի շփոթումը առօրեական ըմբռնումների հետ, երբ հակասություն է համարվում ամեն մի տարբերություն։ Դրանով իսկ հակադրությունների պայքարի միջոցով իրականացող զարգացման սկզբունքը, որը վեր է հանում ինքնաշարժման աղբյուրը, կորցնում է իր իսկական իմաստը, դառնում սոփեստական բառախաղ կեղծ-դիալեկտիկական անտինոմիաներով։ Մյուս կողմից, այդպիսի գուեհկացումը՝ հակասությունների հանգեցումը առօրեական փաստերի, ամեն մի առանձին երևույթի մեջ մտացածին հակասություն գտնելը, այդ սկզբունքը դարձնում է միջոց ամեն տեսակ գործողությունների, այդ թվում և քաղաքական քայլերի, արդարացման և յուրօրինակ բացատրության համար։ Դիալեկտիկայի հիմնական սկզբունքի, ասենք, առհասարակ դիալեկտիկայի, նկատմամբ նման մոտեցումը դիալեկտիկայի ուտիլիտարիստական, պրագմատիստական ընկալման արգասիք է։

Այսպես, սոփեստորեն կորզելով և միմյանց հակադրելով միևնույն երևույթի տարբեր կողմերը և դա հիմնավորելով հակադրությունների պայքարի համապարփակության վկայակոչումով, չին տեսաբանները հորինում են նոր, իրենց հարկավոր, բայց իրականում գոյություն չունեցող հակասություններ։ Օրինակ, ինչպես հայտնի է, չին ղեկավարները ազգային-ազատագրական շարժումը հակադրում են սոցիալիստական սիստեմին և կապիտալիստական երկրների բանվորական շարժմանը, այն հռչակելով գլխավոր ուժ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում և դրանով իսկ ձգտելով պառակտում մտցնել արդիականության ռևոլյուցիոն ուժերի միասնության մեջ։

Հակադրությունների պայքարի սկզբունքի տառացի և մակերեսային կիրառման մեկ ուրիշ բնորոշ օրինակ է հանդիսանում չին ղեկավարների մոտեցումը պատերազմի և խաղաղության հարցին։ Խաղաղության պայքարը նրանք հակադրում են ռևոլյուցիոն շարժմանը, գտնելով, որ մեկը բացառում է մյուսը, որ նա, ով պայքարում է հանուն խաղաղության և պատերազմի կանխման, նա դեմ է ռևոլյուցիային և վնասում է ռևոլյուցիոն պայքարին։ Մերժելով խաղաղ գոյակցության լենինյան կուրսը, չին «մարքսիստները» խաղաղության համար պայքարելու անհրաժեշտության հիմնավորումը համարում են զինաթափում ժամանակակից իմպերիալիզմի հանդեպ։ Կապիտալիզմի և սոցիալիզմի, որպես հակադիր ուժերի, պայքարը, նրանց կարծիքով, իր լուծումն է գտնում պատերազմների միջոցով. այսպիսով, պատմական առաջադիմության հաղթանակի ուղիների մեջ նրանք անվերապահորեն մտցնում են բռնություն։ Այնինչ նման միտումները, ինչպես և կապիտալիստական երկրների ռևոլյուցիոն շարժումները դրսից արհեստականորեն «առաջ մղելու» ավանտյուրիստական կոնցեպցիաները, ընդհուպ մինչև ռազմական միջամտության կոչերը, աղաղակող հա-

կասության մեջ են դտնվում ռևոլյուցիայի վերաբերյալ մարքս-լենինյան ուսմունքի հետ։ Լենինը, քննադատելով «ձախ» կոմունիստներին, գրել է, որ մարքսիզմը «միշտ ժխտել է ռևոլյուցիաների «առաջմղումը», որոնք զարդանում են ռևոլյուցիաներ ծնող դասակարդային հակասությունների սրության հասունանալուն համընթաց»[17]։ Այս տեսակետից չին «տեսաբաններին» դրույթները հանդիսանում են տրոցկիզմի դաղափարների ուղղակի շարունակությունը, որոնց իր ժամանակին խիստ ու վճռական հակահարված է տվել մեր պարտիան։

Պարզամտություն կլիներ կարծել, թե այս բոլոր դատողությունները տեսական թուլությամբ ու մակերեսայնությամբ պայմանավորված սխալների արդասիք են։ Արհեստականորեն հորինված հակասությունների վրա խարբսխվող այս բոլոր մտակառուցումներում առկա են շահադիտական միտումներ, կեղծը ճշմարիտի տեղ ներկայացնելու ձգտում։ Խոսքն այն մասին է, որ չին ղեկավարների այժմյան կուրսի իսկական շարժառիթը, որը նրանք ճգնում են վարագուրել կեղծ-դիալեկտիկական ֆրազներով, ոչ թե հոդատարությունն է կոմունիստական ամբողջ շարժման ապագայի նկատմամբ, այլ նրանց ձգտումը «չինական սոցիալիզմը» հռչակել որպես դաղութային լծից ազատագրվող երկրների համար միակ ընդունելի քաղաքական կուրս։

Այստեղ ակնառու կերպով երևում է նաև, որ դոգմատիզմը կարող է վերածվել մի յուրահատուկ ձևի ռևիզիոնիզմի։ Հռչակելով «չինական մարքսիզմի», «չինականացված դիալեկտիկայի» յուրօրինակությունը, որն իբր թե համապատասխանում է կոնկրետ վերլուծության վերաբերյալ մարքսիզմի պահանջին, չին «տեսաբաններն» այն տեղն են հասել, որ սկսել են պնդել, թե մինչև այժմ գոյություն ունեցած մարքսիզմը հնացել է, թե այն նեղ է՝ միմիայն եվրոպական, և թե մարքսիզմի չինական կամ ասիական ձևն է հանդիսանում այդ ուսմունքի դաղաթնակետը, նրա ժամանակակից ձևը։ Դեռ 1946 թ. Լյու Շաո-ցին հայտարարել է. «Մաո Ցզե-դունի մեծ նվաճումն այն է, որ նա մարքսիզմ-լենինիզմին ասիական ձև տվեց՝ եվրոպականի փոխարեն... Նա ստեղծեց մարքսիզմի չինական կամ ասիական ձևը»։ Մարքսիզմի «չինական ձևի» յուրահատկությունների և առավելությունների շուրջը տեսական մանվածապատ դատողություններով, այնուամենայնիվ, հնարավոր չէ քողարկել այն փաստը, որ տեսական այդ կառուցումները սերտորեն կապված են մեծապետական նկրտումների հետ։

Մարքսիզմի առանձին դրույթների միակողմանի, արտաքուստ միայն հեռևոլյական կիրառման վրա խարսխված տեսական դատողությունները իրենց էությամբ դոգմատիկ են։ Բայց որքանով որ դրանց նախադրված է հատուկ շահադիտություն, որն արտահայտվում է հենց այդ դրույթների կանխակալ ընտրության և միտումնավոր կիրարկման մեջ՝ հակառակ տեսության ներքին տրամաբանության և իրականության օրինաչափ ընթացքի, այնքանով էլ այդ դատողությունները ստանում են սոփեստությունների ձև, դիտակցորեն մոլորության մեջ դցելու ձև։ Եվ որքանով որ այդ դատողությունները, բնականաբար, չեն կարող մի ավարտուն կոնցեպցիա, մի կուռ աշխարհայացք կազմել, որքանով որ դրանք չեն հլնում կոնկրետ իրականության ամբողջական ընկալումից ու կոնկրետ վերլուծությունից, այլ կոչված են տեսականորեն հիմնավորե-

17 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 27, էջ 66։

յու՝ ին ղեկավարների մեծապետական ձգտումները, այնքանով էլ դրանք էկլեկտիկական են՝ ներկայացնում են տարատեսակ, անհարիր տեսական դրույթների համակցություն։

Մարքսիզմը եղել ու մնում է մի ուսմունք, որն իր խոր էությամբ կոչված է նշելու ամբողջ մարդկության առաջադիմության հանապարհը։ Մարքսիզմը չի կարելի «եվրոպականացնել» կամ «ասիականացնել», «չինականացնել», այլ պետք է կարողանալ կիրառել որպես գործողության ուղեցույց, միշտ հիշելով, որ օբյեկտիվ իրականության երևույթներին մոտենալու և գնահատելու սկզբունքը մարքս-լենինյան փիլիսոփայության մեջ ճշմարտության կոնկրետության ուսմունքն է և, համապատասխանաբար, դասակարգային ուժերի հարաբերակցության օբյեկտիվ հաշվառումը, աշխարհում կատարվող սոցիալական ու քաղաքական տեղաշարժերի դիալեկտիկական վերլուծությունը։

ЛЕНИНСКАЯ КРИТИКА СОФИСТИКИ И ДОГМАТИЗМА

В. Г. ОСИПЯН

(Резюме)

Статья посвящена ленинскому анализу теоретических корней и социальной функции софистики и догматизма. В ней разбираются ленинские идеи о гносеологической сущности софистики, как субъективного применения гибкости понятий, о ее противоположности диалектике. Показывается, что сопоставление и противопоставление софистики и диалектики проходят через момент релятивного, в определенной степени наличествующий в диалектике и возведенный в принцип софистикой. Особое внимание уделено социальной функции софистики, к которой прибегали всегда, когда открытому и честному провозглашению своих идей предпочиталось сознательное введение в заблуждение, когда объективно истинному доказательному рассуждению предпочиталось окольными путями протаскиваемое, внешне правдоподобное, но недоказуемое положение, единственно нужное рассуждающему.

Софистика занимает значительное место в арсенале средств искажения марксизма всеми и всяческими оппортунистами. При ближайшем рассмотрении оказывается, что даже догматизму, который педантично придерживается буквы данного учения, не чужда софистика. Обращение догматиков к софистическим приемам доказательства обусловлено, с одной стороны, неувязкой их теоретических построений с действительностью, а с другой — неувязкой вырванных из контекста и односторонне трактуемых положений с духом учения, последователями которого они себя провозглашают.

Актуальность ленинской критики софистики и догматизма показывается на критическом анализе теоретических построений и практических действий сегодняшних руководителей КПК, стоящих на великодержавных и авантюристических позициях.